

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի շնորհավորանքի խոսքը Մայրության եւ գեղեցկության տոնի առթիվ

Հարգարժան մայրեր եւ դուստրեր

Ձեզ ի վերուստ շնորհված մայրության եւ գեղեցկության մեջ է ամփոփված մեր աշխարհի հարատևությունը, հայրենապաշտպան ու ազգապահպան զորավոր ուժը: Ձեր արի կամքի, ցուցաբերած նվիրվածության ու հոգատարության համար դուք արժանի եք ամենայն հարգանքի ու սիրո:

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ գարնանային այս գեղեցիկ տոնի առթիվ, մաղթում խաղաղ երկինք, քաջ առողջություն, հաջողություններ, ընտանեկան երջանկություն, ամենայն բարիք:

Լավագույն ցանկություններով՝

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան